

ԽՈՐԵՆԱՑՈՒ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՒԱԾԻ ՄԱՍԻՆ

Երեսնեան պատմական թերքը՝ ը 1986 թ. իր թ. 33-ում՝ հրատարակեց «գրականագէտ և արձակագիր» Բագրատ Ռւլուրաբեանի մի յօդուածը՝ «Մովսէս Խորենացու 'Հայոց պատմութեան'» աշխարհագույքի հետ յարակից հարցերու Այս թարգմանութեան հեղինակն է վաստակաւոր բանասէր, բնագրագէտ, բառարանագիր ու թարգմանիչ Ստեփանոս Մալխասեանցը։ Նո 1940 թ. լոյս ընծայեց Պատմահօր երկի քննական բնագրի (Թրիլիսի, 1913) արեւելահայերէնը։ Բագրատ Ռւլուրաբեանի կործիքավ գրանում կան թերիներ ու սխալներ։ Այսպէս, ըստ նրա, սխալ են թարգմանուել երկրորդ գրքի կդ գլխի վերնագիրը և նոյն գլխի երգեր ձեռամբ բառերը։ «Գրական թերքը»-ը նոյն 1986 թ. իր թիւ 50-ում (12 գեկտեմբեր) հրապարակել է «գրականագէտ» Գէորգ Արգարեանի ընդդիմախօսութիւնը և Բ. Ռւլուրաբեանի պատմախօսութիւնը։ Ստորև արտայայտելու հմ անկողմանակալ կործիքու Մէջքիրումներն այս թ. 50-ից են։

Ահա քննարկելի խորագիրը և երգեր ձեռամբ բառերն իրենց հատուածում։

ա) Վերնագիր. «Յազագո Տրդատայ Բագրատանոյ և անուանց ազգի նորա առաջնոց» (գիրք երկրորդ, գլ. կդ, էջ 194 տ. 14), Գլուխների ցանկում ընդդուած բառը առաջնոյ է (98. 5), և երեք ձեռագիր ունեն առաջնոց, մէկն էլ՝ յառաջնոց։ Առաջնոյ եղակին գրիպտէ և անշառչա, որ յիշատակուած չէ հրատարակութեան վերջում դրսւած դրիպտէների ցանկում։ Խակ բնագրի առաջնոց-ի փախորէն երեք ձեռագիր ունեն առաջնոյ եղակին, որ անշարիր է, և երկուո՞ր յառաջնոց։

բ) Հատուած կդ գլխից (195. 9-14). «Եւ եղեւ յաւուր միում կոչիլ զնա (ըզ-Տրդատ Բագրատանի). ՄՄ.» ըընթրիս Բակրոյ նահագիրանցին Սիւնեաց. և յուրա-

խանուալն գինւով, տեսնալ Տրդատայ զկին մի, զի յայժ գեղեցիկ էր և երգեր ձեռամբ, որում անուն էր Նազինիկ՝ տրիմցաւ և ասէ յԲակուր. «Տօ՛ւր ինձ զվարձաւկ զայս» և նու ասէ. «Ոչ տամ, զի հարճ իմ է»։ Խակ Տրդատայ բուռն հարեալ ի կինն՝ յինքն քարշեալ ի բազմականն, շամբշեալ վաւաչէր ըստ աւրինակի երիտասարդի անարգել տարգիտաւորի»։ Շարունակութիւնը բուռորին ծանօթ է. «Յիւր վանսն եկեալ (Տրդատայ), իսկոյն ի ձի եկեալ՝ հանդերձ հարճիւն ի Սպեր գնոց» (196. 1-2)։ Յայտնի է նաև, որ այս միշտգէպը ներշնչել է Դանիէլ Վարուժանին «Հարճը», և եղիշէ Զարենցը Խորենացու հետեւողութեամբ, (ինչպէս կործում են երկու յօդուածագիրները), գրել է իր մի քանի բանաստեղծութիւնների մէջ «զեզզեղեն ձեռամբը», և ձեռամբն նու երգում։ Բանաստեղծական մեկնարաւնութիւնները և դրանք էլ որպէս փաստարկում առնելը իմ տեսագալացից գուրու են։

Առանձին քննարկենք նշուած խորագիրը և երգեր ձեռամբ բառերը։

ա) «Յազագո Տրդատայ Բագրատունոյ եւ անուանց ազգի նորա առաջնոց»։

Ստեփան Մալխասեանցի թարգմանութիւն. «Տրդատ Բագրատանու մասին, և նրա ցելի հին անունները» (էջ 131)։

բ. Ռւլուրաբեանի թարգմանութիւն. «Տրդատ Բագրատանու և նրա սահմի նախնեաց անունների մասին»։

գ. Արգարեանի թարգմանութիւն. «Տրդատ Բագրատանու և նրա վելի հին անունների մասին»։

Խնչպէս տեսնում ենք, խնդիրն այն մասին է, թէ բնագրի առաջնոց-ը անուանցի որոշիչն է, թէ՞ զոյականարար է գործածուել և նախնիք իմաստով։ Ըստ Ստ. Մալխասեանցի և Գ. Արգարեանի՝ առաջին հնմադրութիւնն է ճիշտը, իսկ ըստ Բ. Ռւլուրաբեանի՝ երկրորդը։

Նախ մի խօսք զերնագորի լույազն
նախագործեան թարգմանաւթեան մա-
սին:

Բ. Աւագուբարեանը, ըստ իս, «կզրից և թթ ճիշտ է վարուել դրա խնդիրը համարելով նույ անուանց սեռականը, որով՝ «... անունների մասին»։ Նրա հետ լսելուայն համաձայնել է Գ. Արգարեանն ընդդեմ Սա. Մալխսանեանցի, որ անուանց սեռականը թարգմանել է «անունները», կարծես ոս ևս չէինէր լալազս նախադրութեան խնդիրը, ինչպէս Տրդատի Բագրատունոյ սեռականը։

Բաւն խնդիրը առաջնորդ քառի թարգմանութիւնն է :

Բառ Գ. Արգարեանի՞ Բ. Աւոլուբարեանն այդպէս է թարգմանել, «չնկատելով, որ Խորենացին նախնեաց բառը չունի», անչուշտ այդ տողում Որին Բ. Աւոլուբարեանը այսպէս է պատասխանել. «Խորենացին յիշեալ վերնագրում ունի «Նախնեաց» բառը որ առաջնոցն է», քանի որ Շնոր բառգիրք հայկազեան լեզուին (ՆՀԲ) բառարանում (և Սա. Մոլիսասեանցի իսկ բառարանում) առաջինը-ը նշանակում է «Նախնիք», հաւք և հարք, և ՆՀԲ-ում չի բրեն օրինակ էլ յիշում է Խորենացու խօսքը. «Զանիմառասէք բարս առաջնոցն մերոց»», Բառարանների տեղեկութիւնները ծանօթ էին, ինարկէ, Գ. Արգարեանին, որ իր ընդդիմախօսութեան մէջ կանգ է առնում նաև այդ գլխում Խորենացու բառն նպատակի վրայ, որին կ'անդրտադարձամբ:

ՆՀԲ-ումը Արքինացուց քերուած վկաս
յութիւնը քննական բնագրում (և վե-
նետիկան հրատարակութիւնների մէջ,
վերջինը 1955 թ.) այսպէս է. «Յազգակա-
ռանիժմաստաէր բարուց առաջնոյն մերոց
բազւուրաց եւ իշխանաց» (1. 11-12 և
9. 14), որի առաջնոյն բառը դարձեար
իրու սորչիչ է թարգմանուել Ստ. Մալ-
խանեանցի կազմից. «Մեր առաջին թա-
գաւորների և իշխանների անիժմաստաէր
բարքի մասին» (Էջ 1, առաջին գրքի Գ
գլխի վերնագիր, և էջ 5): Արդ, Բ. Ռւ-
լուրաբեանը կ'առարկի՞ արդեօք, թէ
թարգմանիչն այստեղ էլ է սխալուել, և
թէ առաջնոյն նշանակում է «Նախնեաց»
մանաւանդ երբ նոյն Գլուխին սկսուած

է հետեւեալ բաներով՝ «Կամիմ զանիմատասէր բարս առաջնոցն մերոց նախնեացն ոչ առանց յիշատակի բամբասանաց թողուց» (9. 15-16), ուր առաջնոցն բառումնի որոշիչային պաշտօնն իր նախնեաց որոշեալի առկայութեան պատճառով միանդամայն ու է՛լ աւելի բացայայտ է: Խնդրական բառերը Ստ. Մալխասեանցի կողմից թորգմանուել են «մեր հին նախնիքների» (Էջ 5): Խորինացին իր այս խօսքն է ակնարկել Էջ 66. 2-4-ում՝ զրելով. «Օրէէս վերագոյն ուրեմն յառաջին ճառանամբասանեցաք զառաջնոցն մերոցն նախնեացն անիմաստասէր բարուց և ախորժակաց՝ այս հանգիպի և առանուուր, և դորձեալ «մեր հին նախնիքների» (Էջ 42):

Նոյնպէս կառակածելի է Խորենացուց
Նշանաւում բերուած և Բ. Ռելուքարեանի
կաղմից չի շատակուած վկայութիւնը.
«Հանդէս է մեր՝ ոչ զպատճութեանն ող-
ջաբանութիւն գրել, այլ ջանալ ցաւցա-
նել «զառաջինսն մեր և զբուն հին նախ-
նիս» (32. 6-8), որ մէջքերուել է «ցու-
ցանել» -ից սկսած։ Աս. Մալխանեանցը
թարգմանել է՝ «... ցոյց տալ մեր առա-
ջին և բուն հին նախնիքներին» (էջ 20-
21), որով բնագրի զառաջինսն հայցա-
կանը լինում է նախնիս ուղիղ խնդրի
նախագաս որոշիչը, որն ստացել է որոշ-
եալ հայցականի զ-նախդիրը, - 6 յօդը
և լրիւ՝ հոլովազ ու թուով, համաձայնել
է որոշեալին, ինչպէս յառաջինսն որոշ-
եալը հետեւեալ նախագասութեան մէջ
(միշտ Խորենացուց)։ «Այլ ծանի՞ր զա-
տելութիւն մեր առ այսպիսի բան, զի՞ ոչ
յառաջինսն մեր աստցեալ գիրս, և ոչ ի
վերջին բանս արժանաւորեցուք շարել,
այլ զատ և որիշ» (90. 17-19), «...
մեր առաջին զրքում ...» (Աս. Մալ-
խանեանց, 58):

Բերուած երեք օրինակներում (և Խո-
րհնացու ստեղծագործութեան մէջ) նկա-
տելի է որոշիչի (օրինակներում՝ նախա-
դաս) և որոշեալի լրիւ համաձայնութիւն
և, յատկապէս, անջատում՝ նոյն որոշ-
եալի այլ օրոշիչներով, որոնք կարող են
մնալ եզրկի ռեզլականի ձեւով։ Այստեղ
յատկապէս նկատի ունեմ որպէս որոշիչ
առնուած զառաջնոցն, զառաջնուն և յա-
ռաջինսն, Առ. Մայնասնեանցը թարգմա-

նութեան էջ 60-ում գրել է, նկատած լինելով որոշիչի մասին առածու. «Նորինացին. ՄՄ.» յաւաբան հեղինակ է [. . .] Առանձնապէս նաև սիրում է քերտականորէն իրար հետ կատ ունեցող բառերը, ինչպէս որուիչ եւ որուեալ, յատկացուցիչ և յատկացեալ, բայ և մակրայ — իրարից բաժանել միջանկար բառերով»:

Առաջին բառի և նախնիք կամ պարզապէս առաջինները, նախորդները իմաստով կիրառութիւնը բացառուած չէ կորինացու «Պատմութիւն» մէջ. Սակայն նկատելի է, որ այս նշանակութեամբ սովորութիւնը — ն յօդն է առնում. «Ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոց առաջնոցն առ ի յիմաստն տրիմարութիւն» (10. 13-14), « . . . եւ միւս նոխինիների» (Մտ. Մալխատեանց, էջ 6). «Հրամայէ զբազում մատեանս և զգբոյցս առաջնոցն [. . .] այրել» (48. 5-6), « . . . նախնեաց մասին զրոյցներ» (էջ 32). «Գրեաց զգործս Շապիոյ և Յուլիանու Բնդ նմին թարգմանեաց և զառաջնոցն պատմութիւնս, մատեան մի . . . » (206. 8-9), «Գրեց Շոպուհի և Յուլիանոսի գործերի պատմութիւնը: Սրա հետ միասին նաև թարգմանեց նին (բագաւորների) պատմութիւնը պարունակող մի մատեան» (էջ 139): Գոյականաբար գործածուած առաջինք-ի յօդառութիւնը նկատելի է նաև դաստկան բնագրերում. «Լուարուք, զի առացաւ առաջնոցն» (Մոթ Ե 21, 33), «Մարգարէ ոմն/ոք յառաջնոցն յարեաւ» (Դկ Թ 8, 19): Նըթ-ում վկայուկուած են նաեւ զառաջնոցն քաջութիւնս» (2 Մկ Բ 19) և ոչ դաստկան առաջինքն մեր» (ՅԱ. իմ., Անհնաբանութիւն):

Ի հակագրութիւն կորենացուց և դաստկան բնագրերից առաջինքն անախնիք, առաջինները իմաստի համար բերուած վկայութիւնների՝ կորենացու «Յաղագս Տրդատայ Բաղրատունոյ և անուանց ազգի նորա առաջնոց» վերտառութեան մէջ Բ. Ուլուրաբեանի կողմից գոյական համարուած առաջնոցը չունի — ն յօդը և դրանով իսկ կասկածելի պիտի համարուի որպէս որոշիչ: Կորենացու երկու և այլուր գոյականաբար գործածուած առաջինք-ը — ը յօդ ունի, և եթէ չունի որոշիչ:

որպէս որոշիչ գործածուել է թէ' — ն յօդով և թէ' առանց յօդի:

Համարէ է Մտ. Մալխատեանցին և Գ. Արգարեանին. Քննարկուուզ վերնագրում առաջնոցը նախորդ անուանեցու մասին է: Քննարկանութիւնն է թելագրում այս եղբակացութիւնը: Կայ նաև կի գլխի վերջաւորութեան իմաստային կողմը:

Գ. Արգարեանը իբաւամբ գրել է. «Պատմահօր նպատակն է եղել (այդ կի գլխում. ՄՄ.) ոչ թէ թուարկել նախնիներին, այլ սոսւզաբանել նրանց հին անունները, որոնք սկզբում եղել են Բագադիան և այլն: Ասուածը վերտարերում է 196. 4-10-ին: Նկատելի է նաև, որ կորենացին զրել է՝ ոի թողուլ ազգին Բագրատունեաց զաւրէնս նարցն» (196. 4-5), և ոչ թէ առաջնոցն էնախնիներին: Ուշադրութեան արժանի է նաև նրա առաջնոցն մերոց նախնեացն արտայատութիւնը (9. 15, 66. 2-3), կամ պարզապէս «նախնեացն մերոց» (66. 7): Ի դեպ, «զաւրէնս նարցն» բառերով կորենացին նկատի ունի Բագրատունեների երրայտկան ծագումը. նրանք նախորդէն երրայտկան անուններ ունին, որոնք նրանց «նին» առաջին, անուններն են, «յաղագս . . . անուանց . . . առաջնոց» կի գլխի վերնագրում:

բ) «Երգեր ձեռամբ» եւ «Վարձակ»

Մտ. Մալխատեանցը կորենացու երգեր ձեռամբ-ը թարգմանել է «նուազում եւ ձեռներով», իսկ վարձակ բառը՝ «վարձակ» (էջ 181), որին ծանօթագրութիւն է կցել (ծան. 191):

Բ. Ուլուրաբեանը, որ «հիմնականն է համարել երգեր ձեռամբ-ի թարգմանութիւնը, մերգելով» Մտ. Մալխատեանցի թարգմանութիւնը՝ զրել է հետեւելը. «Ես առաւմ եմ՝ սա սխալ թարգմանութիւն է, քանի որ խօսքը վերաբերում է վարձակ նազինիկի պարին, որը Բերթազանոր երկում ընկալուել է բանաօտեղական երանգով. վարձակն այնպէս էր պարում, կաւծես երգում եւ ձեռներով»:

Գ. Արգարեանը համարմիտ է Մտ. Մալխատեանցի թարգմանութեանը և հայե-

րէն Աստուածաշնչի մի հատուածով ջառաւմ է հիմնաւորել այդ, բայց և երգեր ձեռամբ-ի այլ իմաստային նրբերանգ էլ է Նկառում: Խօկ իմ կարծիքը դրաբարի բառարանների և Ս. Գրքի (այսուհետեւ ՍԴ) հայերէն թարգմանութեան նոյն արտայայտութեան իմաստի և միւս թարգմանութիւնների հիմն վրայ այն է, որ կորենացին երգեր ձեռամբ-ը գործածել է Ստ. Մալխասեանցի ընկալում նշանակութեամբ: Սակայն այս բանագէճը ուստանելի է նաև որևէ բանասիրական աշխատանքի և ոկղղնաղբիւրներից օգտուելու ձիչա հղանակի տեսակէտից: Տարրական կ նուն այն է, որ ստուգապէս նշուհն գրանք իրենց գրքերով, գլուխներով, էջերով կամ տնահամարներով և ձմարիտ բառային ամբողջութեամբ: Այս առումով մեղանչել է յատկապէս Գ. Արգարեանը, որին «Գրական բերք»-ը որակել է գրականագէտու և ոչ բանասէր, սակայն նոյն ձշգրառութիւնը պահոննչում է նաև գրականագիտակառութեան մէջ:

Համ Գ. Արգարեանի, երգեր (վրիպակ փոխանակ երգեր) ձեռամբ-ը «բառացի նշանակում է՝ երգում էր ձեռքով»: Նրա կարծիքով «Այսն արտայայտութեան ուսումնականիրութիւնը գիտական կարեւորութիւն ունի», և այն և ձիչա մեկնաբառներ համար ու նաև որոնել է դրա և հնագործան իմաստը, կարծես գրաբարի բառարանները արձանագրած չենչին երգել բայի միւս իմաստը՝ «հարկանել ըզքքնար, նուագել սաղմոսարանաւ» (ՆՀԲ), սաղմոսարան՝ քնար զորնելու (Առձեռն բառարան), նոյնպէս և իմ: Զախշախտեանի գրաբար-հայերէն՝ իտուկերէն բառարանում բնագրային վկայութիւններով, ըստ որում և երգել ձեռամբ (ձեռաւը) արտայայտութիւնը «թագաւորութեանց» առաջին գրքից, բայց առանց գլխահամարի և տնահամարի:

Գ. Արգարեանը երգեր ձեռամբ-ի «հնագործան իմաստը» վնասել է կորենացուն ժամանակակից հայերէն ժամանագրութեան մէջ և յայտնաբերէլ է ... երրայերէնում: Համբերութեամբ լսենք նրան. «կորենացին ժամանակակից էր Աստուածաշնչի հայերէն թարգմանութեանը և, հարաւոր է, որ ինքն ել բարգմանել է

«Գիրք բազաւորութեանց» կոչուող մասը, որում Գալիք բազաւորի մասին կարգում ենք. «Գալիք երգեր ձեռամբ իւրով ու Աւրիշ ոչ մի անգ բացի «Թագաւորութեանց գրքից» և կորենացուց, չի հանդիպում «Իրեւը ձեռամբը»: Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան համար հիմք ծառայած յունարէն տեքստում նոյնպէս այդ արտայայտութիւնը նոյն իմաստն ունի, համեւաբար յունարէնը նոյնպէս չի կորող օգնել կորենացուն հասկանալու գործում: Այդ օգնութիւնը մենք գտնում ենք «Թագաւորութեանց գրքի» երայական բնագրում, որում ասուած է: «Գալիք կիրառ եր նաւազում», Այսպիսով պարզում է, որ «ձեռքով երգելը» ժամանակին նշանակել է ձեռներով նուագել որիէ լորային գործիք: Այսպիսի բացարձութեամբ միաժամանակ յայտնի է դանում, թէ ինչու հին հայերէնում երածշական գործիքները կոչուել են նույ. «Երգեցողական գործարաններ» (վկայութիւն ՆՀԲ-ից. ՄՄ.): Հասկանալի է գառնում նաև «փանգեսնահարական երգ» արտայայտութիւնը (ՆՀԲ), և՝ այլ յայտնաբերութեանը գրաբարի բառարանների համարբարական ոշխաբարում, ինչպէս և երգելով ոժանց փանգումը» (կորենացի), «երգել կիթառով կամ քնարով» (Կիրեղ Աղեքասնդրացի, բայց զերմաններէն մի հանրագիտարանում): Կարծեմ, շատ շատերը լսուծ կը լինեն «կոլամբոսի հաւկիթը» վերնագրուող և անեկդոտը: Մէջըբերման բոլոր ընդգծութեան իմն են:

Զյոյտանելով ՍԳ-ի հայերէն, յաւնարէն կամ երրայերէն բնագրերի լրիւ աղբիւրները, Գ. Արգարեանը թիւրիմացութեան մէջ է զցել Բ. Ալլուբաբեանին, որը, թէն կարգացած մորդ, ինքնին չի յայտնաբերէլ երգեր ձեռամբ-ը ՍԳ-ի որևէ թարգմանութեան մէջ: Նրան պիտի օգնէին երուսաղէմի հայերէն Համբարբարաց, բայց սա չունի այդ արտայայտութիւնը երգել բառայօդուածում: Նրան պիտի օժանդակէր ՆՀԲ-ն իր երգել բառայօդուածով, բայց սա հինգ վկայութիւնից յետոյ ժամանացուց է արել «արք: ա. մն. ևն», ուր նա մի բան յայտնաբերել է, բայց ոչ Գ. Արգարեանի ժամապահածը,

Գ. Արգարեանից իմ բերած առղերի մի քանի մտքերի վերաբերեալ ասելիք ունեմ բաւն խնդրին անցնելուց առաջ:

Ա) Խուենացին իբր «Թագաւորութեանց գրի» բարգմանիչ

Բ. Աւլուբարեանն էլ զրել է այսպիսի ժի բան. «Նո Պ. Արգարեանը. ՄՄ.» զիտի, որ Տերթաղահայրը մէկն է եղել Աստուածաշնչի հայերէն թարգմանութիւնը վերջնական տեսքի բերազներից». ու ամբողջութեամբ մէջ է բերել այն առղերը, որ կարգացինք վերեւում և նաև պարզ չէ. նո համարմի՞ս է Պ. Արգարեանին՝ Խորենացու այս թարգմանչութեան հարցում, Այս կամ ոչ, իմ և հաւանաբար շատերի կարծիքով դա միանլամայն անհիմ ենթադրութիւն է, թէ կուզ միայն այն հիմնական պատճառով, որ Խորենացին յօւնաբան հեղինակ է (վերեւում կարգացինք Ստ. Մալխոսեանցի կարծիքը), իսկ օթագաւորութեանց չորս զրքերը դասկան զրաբարով են: Գիտեմ, որ Երեւանում ոմանք վատ օրինակ դառնալով՝ վարով Առաքելեանի գլխաւորութեամբ դասական են համարում ամբողջ հինգերորդ գարի զրաբարը, բայց ու հաւաքուն է և խանգարում է դրաբարի ճիշտ ուսումնասիրութեանը: Ստ. Մալխոսեանցի կողմից Խորենացու երկի թարգմանութեան ներածութեան մէջ (էջ 9-13) կարելի է կարգալ Խորենացու կինսագրութիւնը, ուր նման սխալ միտք կամ ենթադրութիւն արտայայտուած չէ:

Բ) Խուենացին «Թագաւորութեանց» ո՞ր գրի բարգմանին է (իբր)

Յունաբէն Խօրանասնից և ըստ այս հին, այդ թուում և հայերէն թարգմանութիւնների մէջ «Թագաւորութեանց» չորս գիրք կայ, որոնցից Ա-ն ու Բ-ն երրայկան և սորտգայն եւրապական թարգմանութիւններում համարւում են և Սամուել Ա» և «Սամուել Բ», իսկ Գ-ու Դ-ն «Թագաւորութեանց» Ա և Բ գիրք: Արդ, Խօրենացին բոլորի, թէ ո՞ր զրքի «Թարգմանիչն» է ըստ Պ. Արգարեանի, կամ էլ՝ «վերջնական տեսքի բերող» ըստ Բ. Աւլուբարեանի: Ըստ իս' ոչ մին և ոչ միւսը,

Գ) Պ. Արգարեանի հետախուզութեան հետեւով

Քանի որ Պ. Արգարեանը թաքցրել է հիմնական խնդրի՝ «Դաւիթ երգե ձեռամբ իւրով» և երրայերէն «Դաւիթը կիրառ եր նուազում» մտքի սկզբնաղբիւրը, փորձեցի դա յայտնաբերել:

Նախ՝ ըստ իս յանդգնութիւն է յայտաբարել, թէ ՍԴ-ի անյայտ տեղից և Խորենացուց բացի այդ արտայայտութիւնը տյլուր չէի հանդիպում»: չէ՞ որ գեւես չունենք լիակատար և ամբողջական համարտաբառներ:

Ասեմ նաև, որ կիրառ-ը ՆՀԲ-ի վկայութեամբ գործածուել է միայն «Յայսմուռք ու ուժ»: Դասական զրաբարում և ՍԴ-ում կան տալի, բնար, զնար:

Ինքնուրոյն կամ ՆՀԲ-ից իմանալով, որ հայերէն ՍԴ-ում, յատկապէս ՆՀԲ-ի նշուծ գրքերում կոմ զրանցից մէկում կայ և Դաւիթ երգէր ձեռամբ իւրով», Պ. Արգարեանը նոյն տեղը գտնելով երրայկան բնտգրում՝ տեղեկացի է, թէ սրանում համազօրն է «Դաւիթը կիրառ էր նուազում»: Ինչո՞ւ այս արբերութիւնը: Է՞ն, ի՞նչ անենք. հայերէն ՍԴ-ում դա միակը չէ:

Քանի որ հայերէն Համարաբառը թերի և խիստ արատաւոր է, ուստի միւս թարգմանութիւնների համարաբառունների անուագիլ շահանակող բառերի բառայօդուացներում (որովհետեւ երգել ձեռամբ-ը այդ է նշանակում ըստ մեր բառարունների) հնարաւոր երեք հատուած գտոյն հայ. ՍԴ-ում:

1. «Առնոյց Դաւիթի զինան եւ նուազեք ձեզով» (1 Թգ ԺԶ 23).

2. «Դաւիթ երգե ձեռամբ իւրով ու պէս եւ հանապան» (1 Թգ ԺԸ 10).

3. «Դաւիթ երգե ձեռամբ իւրով» (1 Թգ ԺԸ 9):

ՍԴ-ի այլ տեղերում «նուագիլ» նշանակող օտար բառերի գիմաց՝ հայերէնն ունի յատկապէս սաղմոս ասել» (մասաւանդ Սաղմոսներում):

Զնորքի տակ ունեցայ նաև յօւնաբէն, լատիններէն, ուսւերէն, ֆրանսներէն, անգլիէն և արեւմտահայերէն թարգմանութիւններ, մանաւանդ երրայական ընագիրը և սրա ֆրանսներէն հանդիպակաց թարգմանութիւնը՝ LA BIBLE, édition bilingue. Texte hébreuque d'après la vers-

ion massorétique. Traduction française sous la direction du Grand-Rabbin Zadoc Kahn, *Փարփակ*, 1983.

Գ. Արդարեանի յայտնաբերած վկայութիւնը նշանած էրեքից մէկը պիտի լինի:

Տեսնենք: Բայց նախ ՍԴ-ից մէջքերումներով ասեմ, թէ ինչո՞ւ էր Դաւիթը և ե՛ր քնար նուազում, ո՞ւմ համար: Նա այն ժամանակ թագաւո՞ր էր, քանի որ Գ. Արդարեանը գրել է. «Դաւիթ բազաւորի մասին կարգում ենք. «Դաւիթ երգել ձեռամբ իւրով»:

1. «Եւ Հպի Տեսան վերացաւ ի Սաւալոյ (արքոյէ. ՄՄ.), և խեղջէր զնայս չար ի Տեսանէն: Նրա ծառաները խորհուրդ են տալիս բերել ատլ և այրմի, որ գիտիցի երգել բնարաւ (երր. ազարպիտ քնարեանար) կամ «քնարի վարպետնուագող»), և եղիցի ի հասանել ի վերայ քո այսոյն չարի, որ յԱստուծոյ, երգիսկ զնարաւուն (երր. աքնար նուազին), և գեր լիցի քեզ և հանգուսց զքեղ (1 ԹԳ ԺԶ 14, 16). Սաւալոյը կարգադրում է. «Տեսէք ինձ այրմի, որ բարւոք երգիցէ (երր. «վարպետնուագող») և ածէք առ իս» (1 ԹԳ ԺԶ 17): Ինչպէս տեսնում ենք, հայերէն երգիլ բնարաւ (ii) կամ պարզապէս երգել բառերն այսուեղ համազօր են և քնար նուազելու և նուազել Հասկացութիւններին, ըստ երրայերէն բնագրի և մեր նշան միւս թարգմանութիւնների. Վերջապէս պալատ են բերում երիտասարդ Դաւիթին, որն այն ժամանակ հօսալ է եղել Բնեթզեհնեմում, և 1 ԹԳ ԺԶ 24-ում (վերջին անահամարում) ասուած է հայերէն. «... առնոյր Դաւիթ զքնարն և նուազէր ձեռամբ իւրով! ...», երր. «... Դաւիթը վերցնում էր իր քնարը, նուազում մասներով: Զգիտես ինչո՞ւ, Բ. Ուլուրարեանին թուացել է, թէ Գ. Արդարեանի փաստ-վկայութիւնը հենց այս անհամարն է, և քանի որ հայ. թարգմանութեան կամ երրայերէն բնագրում չկայ «Դաւիթ երգել ձեռամբ իւրով» կամ «Դաւիթը կիրառ եր նուազում», ուստի մէջքերելով նրա հետազտական ուղին նկարագրող նրա իսկ խօսքերը (տե՛ս վերեւում իմ կողմից), նա նենդութեան հոտ առնելով՝ հեգնել է.

«Տեսնո՞ւմ էք՝ աղբիւրներն ինչպէ՞ս իրար լրացնում են, որպէսզի վերջում ապացուցուի, որ երգելը նշանակում է նուազել: Բայց . . . հայերէն Աստուծածանչի մակաւորութեանց» առաջին դրքի ԺԶ գլուխ վերջում (ան. 23. ՄՄ.) գրում է ոչ թէ «Դաւիթի երգէր ձեռամբ իւրով», ինչպէս Արդարեանն է «Կարդացել», այլ «առնոյր Դաւիթ զքնարն և նուազէր ձեռամբ իւրով»: Այս թիւրիմացութիւնը հետեւանք է Գ. Արդարեանի անյստակութեան կամ ծածկամառնութեան, որը կարող է առաջացնել խուլերի զրոյցի նմանուղ բանասիրական կամ գրականագիտական վէճեր, ինչպէս այստեղ: Գ. Արդարեանը կարող է պաշտպանուել, թէ ինքը ա՛յդ աղբիւրը չէ, որ նկատի է ունեցել և, հետեւարար, քնարիրը չի խեղաթիւրել իր նպատակների համար: Սակայն Բ. Ուլուրարեանը հեգնանքով թէ համազուած այսպէս է եզրակացնել, որ հուանարար իր ընդգիւմիսոսին է վերագրել. «Ուրեմն, այսպէ՞ս. Դաւիթը պարող չի եղել, այլ նուազել ու երգել է, նուազարանն էլ քնարն է եղել»: Բատիս, հօտազ Դաւիթը չի երգել, այլ միայն քնար է նուազել Սաւալոյ արքայի տառապանքի պահերին: Ոչ էլ պարել է, Բայց ո՞րն է Գ. Արդարեանի իսկական աղբիւրը: Ի դեպ, ապա «Դաւիթ զնացեալ զարձաւի Սաւալոյը արածել զոշիսոր հաւր իւրոյ ի Բնեթզեհնեմ» (1 ԹԳ ԺԷ 15). նա դիսեւ թագաւոր չէր:

2. Երբ երիտասարդ Դաւիթը մենամարտում յազմահարում է հսկայ Գոզիմովին, Սաւալոյ արքան նրան վերջնականապէս հրաւիրում է պարտ: «Եւ եղել ի վաղիւ անդր և հարաւ այս չար յԱստուծոյ ի վերայ Սաւալոյ, և մարդարէանայր ի մէջ առն իւրոյ, և Դաւիթ երգել ձեռամբ իւրով, որպէս եւ հանպազէ» (1 ԹԳ ԺԷ 10): Անկասկած այս ընդգծուած տողը պիտի լինի Գ. Արդարեանի աղբիւրը, քայց այստեղ Դաւիթը «թագաւոր» չէ (նա շատ յետոյ է դաշնում), և, մանաւանդ, երրայտան բնագիրը չունի «Դաւիթը կիրառ եր նուազում», այլ բառացի՝ «. . . Դաւիթը մատներով էր գործիքին, ինչպէս արել էր նախապէս առնելով՝ հեգնել է»:

գումար էր: Թէև զործիքի անունը արուածչէ, բայց սինչպէս նախապէս «-ը»=զբարար թարգմանութեան մէջ «որպէս և հանապազն» ցոյց է տալիս, որ Դուիթը նկատ էր նուագում, երբ բնագրի ֆրանս. թարգմանութեան մէջ՝ harpe, որ դասական գրաբարում թարգմանուել է նայ, սուիլ և սպասարան: Ֆրանս. cithare բառը կը լինէր կիրառ և փանդին, որ կայ Սդ-ի «Bible de Jérusalem» կոչուած ֆրանսերէն թարգմանութեան մէջ, բայց երբայսկան բնագրի իմ նշան ֆրանսերէն թարգմանութիւնն ունի harpe, ինչպէս 1 Ստմուէլ (կամ 1 թղ) ժ 5-ում: Կարեարն այն է, որ հայ. երգեր ձեռամբ-ն այդ հատուածում նշանակում է «(քնար կամ տուիլ կամ և կիթառ և) էր նուագում», լարային մի զործիք էր նուագում, և ոչ թէ և այնպէս էր պարում, կարծես երգում էր ձեռքերով», ինչպէս Բ. Աւլուրաբեոնն է ուզում բանաստեղծօրէն ընկալել Խորենացու երգեր ձեռամբ-ը, որ իմ կարծիքով էլ սխալ մեկնաբանութիւն է (իսկ թարգմանութիւն բոլորովին չէ): Գ. Աբբո-բենին համերձիւ և՛, բացի և կիթառ ո-ից. երգեր ձեռամբ-ը նշանակում է «նուագում էր ձեռքով» կամ պարզապէս և նուագում էր»: Եթէ 1 թղ Ժ 10-ն էր նրա բնագրային ազբերը, ապա դրան աւելացնելու է 1 թղ Ժ 9: «Դաւիթ երգեր ձեռամբ իւրովի օւ Հաս Յն. Զօհրապեանի հրատարակութեան՝ հայ. թարգմանութեան իմ նշան երեք տեղերում այլ ընթերցուածներ չկան: Այս երբարդ տեղում երբ բնագրի իմաստն է՝ «... Դաւիթը կառում (թթառացնում) էր լարերը», այսինքն՝ նուագում էր անունը չարուած լարային մի զործիք, որը, սակայն գիտենք, քնարն էր:

Գ. Արգարեանը եզրակացրել է: «Այս պիսով պարզում է, որ «ձեռնով երգել' ը ժամանակին նշանակել է ձեռներով նուագել որեւէ լարային զործիք»: Որով նա հասկացել է սաեւ, թէ ինչո՞ւ զրաբարում տուել է երգեցողական զւցաւաններ (թէև նշին-ում, որից առնուած է սա, երգեցողական-ը բացատրուել է և երաժշտական և ոչ միայն և լարային), փանդինամարակ և բարձրական երգ, երգել փանդին, երգել կամ բնարով: Երջանիկ

յայտնագործող: Նրա ուրախութեան վրայ սառը ջուր չենք ուզում ածել, այլ յանուն ճշմարտութեան յիշեցնել, որ այդ բոլորը նշուած է զրաբարի բառարաններում, ինչպէս և՝ երգել բայի 1. «Երգել» ու 2. «Նուագել» երկու իմաստները, և զուր չէ, որ հայ. Սդ-ում առուել է երգել՝ Տաւուլ(ի), Էնրաւ(ի), Քմբկամբ(ի), Ճնդղայիւ(ի), Մենգաւ(ի) և այլն: Գրաբարում երաժշտական զործիքների անունները և երաժշտական այլ արաւայայտութիւնները արժանի են զրաբարի իմացող երաժշտակատի սւսումնասիրութեան: Բացառուած չէր, որ լարային զործիքները անուագում միաժամանակ երգիչ լինէր կամ իրեն ինքն ընկերակցէր. փասերն առան ևն Խորենացու մօտ էլ:

Խորենացու երգեր ձեռամբ-ին վերադառնալով՝ պիտի տոհմ, որ այստեղ էլ ինչպէս 1 թղ Ժ 16-ում կամ Ժ 9-ում, այն նշանակում է եւ պիտի նշանակի և նուագում էր ձեռքով (բառացի) կամ և (լարային մի զործիք) էր նուագում: զործիքը կարող էր լինել հայկական վանդիք կամ լարային այլ զործիք, ինչպէս ջնար-ը, որից՝ ջնարան: Այս բառը գտնում ենք Խորենացու «Պամուրեան» երրորդ զրքի Ծերիսի վերջաւարութեանը՝ էջ 331-21: Այստեղ յիշատակուում է մեզ հետաքրքրող Տրդատ Բագրատունուանունը. «Խնճոյքի ժամանակ Խոսրով Գրդմանացին զինով հարբած (. . .) հետամուտ էր լինում մի կնոջ, որ վարժանեներով ջնար եր ածում: Շապուհը զայրանալով հրամայում է նրան բռնել ու դանիճում պահել, իսկ նս աջ ձեռքը որի գրած գրած: Տրդատ Բագրատունու նման, անցաւ զնաց իր տունը . . . » (Ստ. Մալխանինց, էջ 230). գրաբարը « . . . զնաց ջնարանար հաջաման կնոջ կրթէր» և « . . . պիտի զունակ Տրդատայ Բագրատունույ Ես նմանութիւն եմ տեսնում ոչ միայն երկու «Հերոսների», այլև տաւել՝ նոյնութիւն վարձակ Նազինիկի երգեր ձեռամբ-ի եւ ջնարանար հաջաման կնոջ զործողութիւնների միջև: Երկուսն էլ լարային զործիք էին նուագում, այստեղ բացայայտորէն ջնար, որը, հաւանաբար, գրաբակ Նազինիկի նուագում նոյն զործիքն էր, քանի որ հայոց և պարսկա-

կան առաջնին կամ գոնէ խնճոյքի սովորոյթները նոյն կամ նման էին:

Գ. Արդարեանն իր «Հայտարարեամբ» լուծուած պիտի համարէր երգեր ձեռամբ-ի անուագել» իմաստի հարցը: Բայց Զարենցի «զեղգեղեն ձեռամբ»-ն էլ լուսարանելու միտումով, թէ. Ուլուրարեանի բառերով ասած՝ տարուել է և մասնաւծապատ դասողութիւններով» և կրկին առաջարկում է, թէ և Անհրաժեշտ է հանգամանօրէն քննել այն՝ (երգեր ձեռամբ-ը. ՄՄ.) պարզելու համար արտայայտութեան բան իմաստը», ասես՝ թերթի մէկ ու կէս սիւնուկում ջուր ծնծած լինէր: Հաւանարար բարի գիտաւորութեամբ զինուած՝ Զարենցի Մ. կմին, լատիներէն-ռուսերէն բառարան իրար խառնելով զրել է. և «Թագաւորութեանց զրքում» տակայ (առանց անելու տեղը. ՄՄ.) իմաստից տարբերուող այս զուգանես իմաստի [Հ] համաձայն՝ շարժուող ձեռքը երգին չափ հազարդող և նրա հետ շարժուող ձեռքն է: Եւ այս դէպքում [Հ] նոյնպէս խօսքը վերաբերում է երգին և ոչ՝ պարին (որի վրայ պնդում է թ. Ուլուրարեանը. ՄՄ.): Որ երգի իմաստով է գործածել նույն իսորենացին՝ երեւում է միաժամանակ՝ «Հայոց պատմութեան» երարդ գրքի 19-րդ զիլից. «Անձնահաճ եղեալ՝ պարծելով հանապազ ի գինարբուս և յերգիս (զրիգակ փոխանակ յիւզ. ՄՄ.) վարձակաց՝ Գրարար վարձակ նշանակում է ե՛ւ պարունի, ե՛ւ երգչունի Ասորինացին գործածել է, ինչպէս տեսնում ենք [Հ] երգչունի իմաստով»: Ես լոյս այն եմ տեսնում, որ Գ. Արդարեանը ՄԳ-ի երգեր ձեռամբ-ին և նուագել ամաստն է վերաբերում, իսկ Ասորինացու հատաւումը՝ «երգում էր ձեռքով»: ինչպէս վերջին գրածներից եղբակացրել է թ. Ուլուրարեանը ու զրել. և Բու էլ ո՞ւր մնաց «նուագում էր ձեռներով»: Չ. Արդարեանը հետեւողական չի ինելու սխալում է ըստ իս և ինձ յիշեցնում է Բու: Ես առաջնորդ կամաց առաջնորդ էր ձեռներով»: Գ. Արդարեանը հետեւողական չի ինելու սխալում է ըստ իս և ինձ յիշեցնում է Բու: Առաջնորդ կամաց առաջնորդ էր ձեռներով»: Միայն կամալսարան

«անեկդոտ»:

Երկու յօդուածագիրները տարածայն են նաև գրաբար վարձակ բառի իմաստի շուրջ: Ըստ գրաբարի բառարանների, վարձակ՝ «կին երգեցիկ՝ երաժիշտ, և կաքաւիչ ի խնջոյս և ի թատրոնս», կամ՝ «կին երգեցիկ կամ երաժիշտ կամ կաքաւիչ»: 2 թիվ մթ 35 «Լսիցեմ տակուին զձայն գուսանաց և վարձակաց», երբ, ընագորում՝ «երգչունիների»: Ըստ Համարարբառակի՝ ՄԳ-ում սա հայերէն միակ գործածութիւնն է: Ըստ ՆշՀ-ի, Ասկերանի գրաբար թարգմանութիւններում հանդիպում է վարձակ, որի գիմաց յունատագիրն ունի երբեմն պառանիկ կամ բոզու Որով Ստ. Մալխատեանցը այս բառը ծանօթագրել է այսպէս: «Վարձակ — թեթևաբարոյ կին, որ համարակութեան առաջ երգում էր, նուագում էր, միմոսութիւններ էր անումում երբեմն գործ է ածում նույն բոզ բառի նշանակութեամբ»: Բոլոր վարձակներին և թեթևաբարոյն համարելու ոչ մի հիմք չկայ:

Բ. Ուլուրարեանը բացայայտօրէն չի յայտնել իր կարծիքը վարձակ-ի նշանակութեան վերաբերեալ, այլ ընդդիմախօսունին քննուածանելով նրա ընտրուծ և երգչունիք իմաստի համար՝ գրել է: «Նոյնիսկ զրու համար Պատմահօր բառապաշտը նոր իմաստաւորում է ստանում»: Ուստի, նրա կարծիքով՝ Նոյնինիկ վարձակը պարունի էր, ոչ երգիչ կամ նուագոզ, քանի որ իր յօդուածի սկզբում նոտ գրել է: «Խօսքը վերաբերում է վարձակ նազինիկի պարին»: Նկատել եմ տալիս, որ Ասորինացին ոչ մի բառով չի յայտնում նոյնինիկի պարունի կամ երգչունի կամ բոզու ձեռամբ էր անուագում էր»: Բայց առաջնորդ չէ, որ նոտ զուցէ զիտէր նույն երգել ու պարի:

Բ. Ուլուրարեանն իր պատասխանի վերջում մաղթում է, որ վէճը զիտութեան մէջ և կիսութեամբ լինի «արդար ու անխարդախ»: Ես առելուցնում եմ՝ նաև առանց ծածկամտութեան կամ աղբիւրների գաղտնապահութեան:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
Ժնեվի համալսարան